

ՏԱՃԱՐ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Կրօնական, Ազգային, Գրական

ՏԵՐՈՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ՋԱՐՄԱՅԻ ՔԱՂԱՆՈՅ ԿԷՋԻԻԲԵԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 10 ՅՈՒԼԻՍ 1910

ԹԻԻ 15

“ՏԱՃԱՐ,”

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ համար տարեկան	35 դրուշ
Գաւառաց » »	40 »
Արսասահմանի համար տարեկան	40 ֆրանկ
Ձեռքէ կը ծախուի պրակը	40 փարա

Բաժանորդագիները կանխիկ են

“ՏԱՃԱՐ,” թէ՛ վարչական և թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է գիմել առ
Զարմայր Բահանայ Կեզիւրեան, Կ. Պոլիս, Պեշիքթար, Հայոց եկեղեցի,

درسمادنده بشکهاشده ارمنى کينساننده « داجار » غزته مى مدبرى پاپاس زارماير

Rev. Père Zarmaïr Guézurian Rédacteur de la Revue «DAJAR»
Constantinople, Béchiktache Eglise Arménienne

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՏԱՇԵՍ ՆԵՐՍԷՍ

Կ. Պոլիս, Պապը Ալի, Շերէճ փողոց, քիւ 33

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Գնէլ Ծ. Վրդ. Գալէմբարեան
2. Տ. Տիրայր Ծ. Վրդ. Մարգարեան
3. Տ. Ղեււնդ Ծ. Վրդ. Դուրեան
4. Տ. Սուրէն Վրդ. Գալէմեան
5. Տ. Հմայեակ Բհնյ. Էքսէրճեան
6. Տ. Արիստակէս Բհնյ. Հիսարդեան
7. Տ. Զարմայր Բհնյ. Կէզիւրեան

ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Ղեւնդ Ծ. Վրդ. Դուրեան
2. Տ. Հմայեակ Բհնյ. Էքսէրճեան
3. Տ. Խորէն Բհնյ. Յարութիւնեան
4. Տ. Սուրբաւ Բհնյ. Պաղքճեան
5. Տ. Պօղոս Բհնյ. Պէյազճեան
6. Տ. Խորէն Բհնյ. Վարդանեան
7. Տ. Գէորգ Բհնյ. Անանեան
8. Տ. Գրիգոր Բհնյ. Ճէպէճեան

ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ

«ՏԱՃԱՐ» ԿՐՕՆԻ ԹԵՐԹԻ

- ԱԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ. — Առաջն. Փոխանորդ Տ. Արսէն Բհնյ. Դերձակեան
- ԱՂԵՔԱՆԴՐԻԱ. — Տ. Ռուբէն Բհնյ. Դարիկեան
- ԱՄԵՐԻԿԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Պօղոս Վրդ. Դաթիթեան
- ԱՅՆԹԱՊ. — Տ. Գարեգին Բհն. Պղարեան
- ԱՅԻՕՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Խաչատուր Ա. Բհնյ. Տօնէլեան
- ԲԱԲԵՐԴ. — Մ. Սանտսեան էֆ.
- ԳԱՂԱՏԻԱ. — Առաջնորդ Տ. Բաբէն Ծ. Վրդ. Կիւզէսէրեան
- ԳԱՀԻՐԷ. — Առաջնորդ Տ. Մկրտիչ Ծ. Վրդ. Աշաւուհի
- ԵԴԵՍԻԱ. — Բ. Թիւրաբեան էֆ.
- ԵՕՁՂԱՏ. — Առաջնորդ Տ. Խորէն Ծ. Վրդ. Դիմաքեան
- ԵԲՁՆԿԱ. — Առաջնորդ Տ. Երուանդ Վրդ. Փէրտաճեան
- ԵԻԴՈԿԻԱ. — Առաջն. Տեղապահ Տ. Արտաւադ Վրդ. Գալէնտէրեան
- ԶՄԻԻՆԻԱ. — Տ. Յարութիւն Բհնյ. Տ. Սարգիսեան
- ԷՍԿԻՇԷՀԻՐ. — Տ. Գալուստ Բհնյ. Տ. Գալուստեան
- ԽԱՐԲԵՐԴ. — Առաջն. Տեղապահ Տ. Գէորգ Ծ. Վրդ. Աջանեան
- ԿԱՐԻՆ. — Առաջնորդ Տ. Սմբատ Ծ. Վրդ. Սառաթիւնեան
- ԿԻՐԱՍՈՆ. — Մաթոս էֆ. Թորապեան
- ԿԻԻՄԻԻԺԻՆԷ. — Տ. Ներսէս Բհնյ. Նշանեան
- ՀԱԼԷՊ. — Առաջն. Տեղապահ Տ. Շահէ Վրդ. Դաւադեան
- ՄԱՆՉԷՍԹԵՐ. — Առաջնորդ Տ. Գէորգ Ա. Եպիսկ. Իսթիւնեան
- ՄԱՐՍԵ. — Տ. Հմայեակ Բհնյ. Վարժապետեան
- ՄԱՐԶՈՒՆ. — Յակոբ էֆ. Սրապեան
- ՆԻԿՄԻԴԻԱ. — Տ. Ոսկի Բհնյ. Պլպիւնեան

- ՆՈՐ ԶՈՒՂԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Բաղարատ Վրդ. Վարդապարեան
- Շ. ԳԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Նաթան Բհնյ. Տառեան
- ՈՒՇԱՔ. — Կարապետ էֆ. Բէհեանեան
- ՊԱՆՏՐՄԱ ՊԱԼԷՔՍԻ. — Առաջնորդ Տ. Կարապետ Ծ. Վրդ. Մալլաբեան
- ՊԱՂՏԱՏ. — Առաջնորդ Տ. Մովսէս Ա. Եպիսկ. Կլօմբիւքճեան
- ՊԱՅՐԱ. — Կարապետ էֆ. Բէրթմէնեան
- ՊԱՐՏԻՉԱԿ. — Յովհաննէս էֆ. Տ. Կարապետեան
- ՊԵՐՈՒԹ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Եղիշ Կիւզէլ Վրդ.
- ՊՈՒՔՐԷՇ. — Ղազարոս էֆ. Կանիկեան
- ՊՐՈՒՍԱ. — Առաջնորդ Տ. Յովհաննէս Ա. Եպիսկ. Արշարունի
- ՌՈՒՍՃՈՒՔ. — Տ. Մկրտիչ Բհնյ. Մըրջնիկեան
- ՌՈՏՈՍԴՕ. — Առաջն. Փոխանորդ Տ. Բաթող Բհնյ. Թարմեան
- ՍԱՄՍՕՆ. — Առաջնորդ Տ. Սահակ Ծ. Վրդ. Օտապաշեան
- ՍԵՖԱՍԻԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Թէոփիլ Բհնյ. Օտապաշեան
- ՍԵԼԱՆԻԿ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Կարապետ Բհնյ. Թուխմեան
- ՍՕՅԻԱ. — Տ. Մեարապ Բհնյ. Տ. Մեարապեան
- ՏԱՐՏԱՆԷԼ. — Տ. Դիոնիսիոս Բհնյ. Տրէդեան
- ՏԷՎԷ ԱՂԱՃ. — Տ. Գարեգին Բհնյ. Տէօլթիւնեան
- ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. — Դաւիթ էֆ. Մովսէսեան
- ՏԻՄԷՐՕԳԱ. — Տ. Գէորգ Բհնյ. Թէրզեան
- ՏՓՂԻԱ. — Հ. Առաքելն
- ՓԱՐԻՉ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Վառնապետ Բհնյ. Քիւպարեան
- ՔԷՕՍԹԷՆՃԷ. — Տ. Մատթէոս Բհնյ. Մանիկեան
- ՔԲԻ. — Առաջն. Տեղապահ Տ. Պսակ Վրդ. Յիւլիոյէ. — Տ. Տաճատ Բհնյ. Դերձակեան
- ՅԻՇԶՆՕ. Յակոբ էֆ. Նշանեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ Կրօնական, Ազգային, Գրական

Ա. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 10 ՅՈՒՆԻՍ 1910

ԹԻԻ 15

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ. — ԽՄԲԱԴՐԱԿԱՆ Սանակ եւ Մեսրոպ, — ՋԱՐՄԱՅԻՆ ԲԱՆԱԿԱՅ, **ՕՏԱՐ ԷՋՈՐ**, Անճառութեան գաղափարին հրահանգութիւնը, (Թարգմ.) օր. ՎԱՐԴԱՆՈՅԵ ՍԻՒՔԱՆԵԱՆ, — Մայրական սերը: բնախօսական, ԼԵՒՈՆ Գ. ԳԱՐԱԿՈՋԵԱՆ, — Պատմ. Հայ. Ձայնագրութեան, — ՎԵՍՏ. ԲԷ. ՀԻՍԱՐԵԱՆ, — **ՄՈՒՅՈՒՄ.Ի ԷՋՈՐ**, Առաջին հայ ուսուցիչը, ԼԷՕ, — Սիմոնական տեսերը, (Շար.) ՍԵՓԻՈՐ ԱՐՓԻՈՐԵԱՆ, — **ԱԶԻԱՅԱՆ ԿԵԱՆՔԸ**, — Շաբթուան կարեւոր լուրեր, ԽՄԲԱԴՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՍԱՀՄԱՆ ԵՒ ՄԵՍՐՈՊ

Զոյգ մը լուսատու ջանքեր, պայծառ փորձանքեր՝ հայ կեանքի ալիքով ուղիղ տեղին տալու համար միջաթիւններուն մէջ պլուզացող, զոյգ մը փայլուն աստղեր՝ Հայտ գործողը զոյգութեան խառնարկուած հորիզոնին վրայ շողացող՝ իրիկ երկու անշխիւդ աստղեր, որ իրենց ներշնչած ինքնատիտաճութեան ուժով ու կորովով դարձած են մեծագոյն պաշտպանը հայ ինքնուրոյն կեանքին, իրենց շողարձակ ճառագայթներով ցուցուցած են ճամբան ուրիշ կարող է ցնդ մը հաստատ քայլերով յառաջանալ զէպ ի տարազան, պահելով իր ատենաճառ յատուկ բարձր ու նկարագրիչը, իր անձնուրոյն զոյգութիւնը, իր ուրոյն, որոշ կեանքն ու քաղաքակրթութիւնը՝ հակընդդէմ քաղաքակրթութիւններու տառաւոր բաշխումին մէջ, որուն թաղար կըլա հի՛ն հի՛ն գարեթի ի վեր իր դժբախտ երկիրը, Հայաստան:

Սանակ եւ Մեսրոպ, իրենց կեանքովն ու գործերով ազգային սուրբ մարդիկ, մե՛ծ երախտաւորներ, — զորս ամենց Հայ. Ս. Եկեղեցին Ե՛ւ օրը — հսկայ դեր մը ունեցան Հայտ ճակատագրին մէջ, Ազգային կեանքի ամենէն ճգնաժամային մէկ բուռին տարած, երբ Հայտ քաղաքակրթական զոյգութիւնը — այդէն երկուսն, անհատաւոր հիմերու վրայ դրուած, — ախար, անխառնաճակ փլուզումով մը վերջանալու մօտ էր, երբ նոր կրօնք մը (Քրիստոնէութիւնը), եւ անոր զուգընթաց նոր քաղաքակրթութիւն մը (Արեւմտեան քաղաքակրթութիւնը): անհաշտ թշնամի կը դարձնէին մեզի՛ց հեղի, բարբի ու քաղաքակրթական բաժանումի տեսակէտներով ամենէն մօտիկ վիթխարի ուժ մը պարսկական հսկայ ուժը, — Սասանեանց տիրապետութեամբ նոր կեանք մը, նոր թափ մը առաջած, — անոնք, այդ երանելի մարդիկը, քաղցնալիչ համառ տնտեսով ներկայացած, կատարելին այնպիսի գործ մը որ իր մէջ կը բախանդակէ կենսաւնակութեան անապատ տարր մը, որ զրկելէ միտի նեցուկը արտի լլար անոր

թուած—, ոգեւորեալ աշխտութեամբ ի
հլուխ չհանէին Աստուածաշունչի հոյակապ
թարգմանութիւնը—, թարգմանութիւն—
ներու թագուհին—, և այն գեղեցիկ գրաւ
կանութիւնը որ Ոսկեղար տիարդսով պիւ
տի օժտէր հինգերորդ դարու աւաջին կէսը,
և վերջապէս—ու մանաւա՛նդ—կթէ այդ
անձնուէր հոգին, այդ մեծ միտքը, Մեսրոպ,
ինքզինքը չտար իր նախնիքս վսեմ
գործին, ուսուցչութեան, այս անգամ ար-
դիւնաւորապէս: Անո՛ր, այդ սուրբ մարդուն
սկզբնական մղումովը տարածուեցաւ լոյսը
Հայաստան աշխարհի մթին անկիւններուն
մէջ, անկիւն՝ տուաւ միջոցը՝ Հայը կարող
դարձնելու քաղաքակրթութիւնն ընդունելու
իր մէջ, պահպանելու իր լեզուն, իր
կրօնքը, իր աւանդութիւնները, և վերջա-
պէս ինչ որ իր ինքնութիւնը կը բը-
նորոշէ, ինչ որ սուրի և հուրի մատնուած
ցեղի մը կուտայ բարոյական ուժը՝ արժե-
ցնելու իր ինքնապահպանութեան բնազդը:

«Արիւն—տւերանքի դարեր կան ու
գնացին» — կը գրէ Լէօ՝ Ռուսահայ նշա-
նաւոր գրողէն Ս. Մեսրոպի ուսումնաւի-
րութեան նախնուած հոյակապ հատորին
մէջ,— գահեր հիմնվեցին, գահեր խորտակ-
վեցին, ազգաշնորհութիւնը սպառվելու չափ
ջնջվեց, ստրկութեան ամենադժման լուծեր
կրեց իր վզին: Բայց խաւարի ու անէծա-
ների մէջ չէին շարունակուած կենդանութեան
կրակները: Դրանք ամեն ժամանակ, ամեն
տեղ միւսնոյն կերպարանքն ունէին. —
Մեսրոպեան գիրը: Մեր հաղարտման անշ-
ուալի այն երկար ճանապարհին, որի վրայ
փռված են մեր անհուն տառապանքները,
ոչ բանակներ ունէինք մեր պահպանու-
թեան համար, ոչ ոյժ, ոչ հնարաւորու-
թիւն, ոչ էլ դրախ օգնութիւն, այլ մի հա-
տիկ բան միայն. — Մեսրոպեան գիրը:

Կամենում էք տեսնել նշա հրաշագոր-
ծութիւնը, դիտել էք մեր պատմութեան
ամենամուսկլ, զարհուրեցնող շրջանները,
երբ բռնաւորի սուրբ գերեզմանոց էր դար-
ձնում մեր երկիրը: Դուք կը տեսնէք իտա-
ւար և մուսուլման. գրականութիւնը դա-
դարած է, երկիրը վայրենաւում է, անսպ-

պատի փոխում: Բայց մէկ էլ նշմարում
էք որ մի փոքրիկ լոյս վառվեց. — հեռա-
ւոր մի խորում բայց և զարույց, և
մարդիկ գիշեր ցերեկ գիրք են կարդում:
Փոխվում է տեսաշունչ: Կամայ կամայ
երեսան են գալիս մարդիկ, աշխարհը ձըլ-
տում է զէպ ի բարեկարգութիւն, և արիւ-
նոտ պատմութեան էջէրում լոյս են տալիս
ժպիտ և յոյս պատճառող երեսցթիւնը:

Անցան բռնութեան երկաթէ դարերը,
նոր ժամանակներ լուսացան, երբ ազգերը
պիտի մկրտվէին եւրոպական լուսաւորու-
թեան մէջ: Դրանքնութիւնը բաժանվեց
Եկեղեցուց, աշխարհիկ կերպարան տալու:
Հայերի ստաջ էլ դրված էր լինել — չլինելու
անողորմ հարցը: Այդ խորհրդաւոր ժամա-
նակում դարձեալ Մեսրոպն էր, որ կու-
մեզ առաջնորդելու զէպ ի այդ նոր պա-
հանջը: Եւ մենք էլ մասնք կրթվող, ա-
ռաջողիւնող ազգերի շրջանը:

Հաղար հինգ հարիւր տարի է ահա, ինչ
մեզ հետ է Մեսրոպը:

Հայ տղա՛ք, պաշտեցէք այդ երախտու-
ւոր նախահայրը, որ մոքի լուսաւորու-
թեան զործիքը տուաւ ձեզի:

Հա՛յ երիտասարդներ, խոնարհկցէ՛ք
այդ հզօր միտքին առջև որ քաղաքակր-
թեամբ ազգերու մէջ պատուաւոր դիրք մը
մը հայթայթեց ձեզի:

Հա՛յ կոյսեր ու հա՛յ մայրեր, ծուռկի և
կէք այդ անձնուէր ու փափկասիրտ հօր
առջև, որու շնորհիւ այսօր կրնաք հայերէն
մընջել սիրոյ դաշներգը, հայերէն կրգել
ձեր օրօրները՝ մանուկներու սնարին վերև:

Հայ մամիկներ՝, օրհնեցէ՛ք այն մեծ
հոգիները, որոնց խանդավառ հաւատքին
և յարատեւ ճիգերուն շնորհիւ կրնաք լու-
սաւորչաւորութեամբ տաճարներու մէջ հայերէն
մըթմըթսլ ձեր աղօթքները:

Ընդհանուր հայ հաւատապետներ՝, ամէն
հատակէ և սեռէ իտէպ ունեցէ՛ք ձեզի
զօրաւոր հաւատքն և հատառտմութիւնը,
նոտ տիպար հեղութիւնը մեծ և գերզգօն
վարդապետին, որ «երմանեալ Մովսէսի»,
Հայաստան աշխարհ լմբաւ «զգիր օրինաց»,
որով լուսաւորեցան ազգ որդւոյ թորգո
մայ»:

Ռոնարհէ՛ք, ծուռկի կէք, պաշտե-
ցէ՛ք այդ արբազնասուրբ հոգիները:

ՋԱՐՄԱՐ ՔԱՀԱՆԱՅ

ՕՏԱՐ ԷՋԵՐ

ԱՆՄԱՆՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓՍՐԻՆ

ՀՐԱՀԱՆԳՈՒԹԻՒՆՆԵՐ(¹)

Կէս դար անցած է զարոյցի ընկերաջ-
մէս բաժնուելէս ի վեր: Երբ իրարու
հանդիպինք իրարու զիմագիծ չենք
ճանչնար: Բայց հինգ վայրկեանի տեսակ-
ցութենէ մը վերջ իրարու հոգի կը ճանչ-
նանք: Ինչ որ տեսանելի է փոխուած է:
Անտեսանելին էութեամբ նոյնը կը մնայ:
Որքա՛ն յաճախ, հինգ կամ տասը տար-
ուան ծանօթութենէ մը վերջ, երբ կա-
րողութիւն մը անսպասելի կերպով յայտ-
նուի բարեկամի մը մէջը, կ'ըսենք:

— Չէի գիտեր թէ այդ կարողութիւնը
կար իր մէջ:

Բայց ան անոր մէջն էր, թէև ան-
տեսանելի իր իրական, անծանօթ, ան-
տեսանելի ինքնութեան մէկ մասն էր:
«Ոչ ցեղոր, ոչ աւանդութիւնը, կ'ըսէ Բրոֆ-
շիւկո Միւնսթէրպէրկ, և ոչ նոյն իսկ
անցեալը Ամերիկային իր երկրացիներուն
հետ կը կապէ. այլ այն ազագան զոր
միասին կը շինեն»: Սա ուրիշ բան չի
նշանակեր, բայց եթէ Ամերիկա անտե-
սանելի անհատականութիւններէ կազ-
մուած երկիր մըն է, որոնք իրարու կապ-
ուած են կապով մը զոր չափ լու կը սահ-
մանէ Մր. Հէրպէրթ Քրոյի, «Լատագոյն ա-
պագայի մը անտեսանելի տեսիլքը» կոչելով
զայն: Ա. դ. Լատագոյն ապագայի մը ան-
տեսանելի տեսիլքն է որ բոլոր այս այ-
լասեռ տարրերէն ճշմարիտ ազդ մը կը
կազմէ:

Բացայայտ է թէ անմահութեան հա-
ւատքին հին ձեւը հետզհետէ կ'ազօտա-
նայ, և մենք ոմանց մէջ բոլորովին ան-
հետացած է: Նոյն իսկ գիտութեան
ձեռքով մեր նախկին մոտապատկերները
դադրած են իրական ըլ ալէ Չենք կրնար

երեւակայել մեր ստեղծութեան տակ սոսկալի
փոս մը, որուն մէջ

Սարսափելի զնամ մը, ռուբա-
նակի կլոր,

Մեծ հնոցի մը պէս կը բոցավա-
ռեր, սակայն այդ բոցերէն

Ոչ քէ լոյս կը տեսնուէր, այլ մրու-
թիւն:»

Մեր ստեղծութեան տակ գտնուած
երկրին ներքին մասը այնչափ լու
կը ճանչնանք այժմ, որ այս տեսիլին
չենք կրնար հաւատալ: Չենք կրնար և-
րեւակայել ատենդադարէ գմբէթէն վեր
երկնային քաղաք մը, որուն հիմերը թան-
կագին քարերով զարդարուած ըլլան,
զուռները մարգարտէ, և սալաշատակ-
ները սակիէ: Երբեք տեսնու զիսկեք թէ
ստեղծադարէ գմբէթ չկայ, բայց միայն
անհուն միջոց մը:

Հին ժամանակի պատկերները այլևս
մեր զգացողութեան չեն խօսիր: Երբ
մարդ կը հաւատար վախին արգելիչ կա-
րողութեան, և արդար կը համարէր ողջ
ողջ մարմնէ, ողջ ողջ եփեղ և անխիւ
վրայ կտոր կտոր ընել հասարակ ոճրա-
գործը, դիւրին էր երեւակայել չորչո-
րանքի սենեակ մը՝ իրր Աստուծոյ ար-
դարութեան գործիքը: Բայց հիմայ որ
ստիպած ենք թէ այս և սկսոյ ներշնչող
ուժերը ճշմարիտ դարձան միջոցներն են,
և թէ արդարութիւն և գիտութիւն դո-
ժակից են իրարու, այլևս չենք կրնար
վերագրել արդար Աստուծոյ մը՝ ցոռում
մը զոր մարդուն մէջ անարդար կը դրու-
նենք:

Գեհենի կրակը անհետացած է միւս
աշխարհէն, ինչպէս տանջանքը անհետա-
ցած է սակիէ:

Յախտենտիւն փառարժուութեան մը
մէջ անվերջ ստիպողութիւններու տե-
սիլը չի հրապարակիր այն մարդը որ ու-
սած է ծառայութեան եւ զոհաբերու-
թեան մէջ աւելի մեծ հրճուանք գտնել
քան անդադրում փառարժուութեան:

Կրօնական հաւատքը հետզհետէ նոր
ուղիութիւն մը առնելու վրայ է: Աւելի
կը շահագործուինք այս աշխարհէն դը-

(¹) Շարունակութիւնն նախորդ քիւէն
եւ վերջ:

ժողովը վստահեցաւ, քան մահուընէ վերջ
դժոխքէն խոտարեւելու մասին, աւելի
կը շահագրգռուինք երկնից թաղաւ-
րութիւնը երկրիս վրայ բերելու, քան
երկրի վրայ՝ ապագայ երկնքի մը թա-
գաւորութեան պատրաստուելու:

Պէտք է անկեղծօրէն լնդունինք այս
փոփոխութիւնը:

Կորուսած տեսիլը չենք կրնար վերըս-
տին գտնել, չենք կրնար երկնային քա-
ղաքը դարձեալ շինել, և միջնադարեան
աստուածորանութեան և միջնադարեան
պատկերներուն դառնալ: Պէտք է յա-
ռաջ երթանք եւ ոչ՝ թէ՛ ետ: Ապագայ
անմահութեան մը մասին մեր հաւատքը
ներկայ անմահութեան մը մեր գիտակի-
ցութենէն պէտք է բոլորի: Ան պէտք է
աւելի Բրիտանիոյ թիւն ըլլայ նուազ
«Յայտնութիւն», ուսով Յովհաննէս Գու-
շակոյի լինին պէս, աւելի գործող Յիսու-
սինին պէս: Անմահութեան մասին մեր
ունեցած հաւատքը պէտք է կազմուի
անմահ Լեանք մը տարեկով հաս, Վասն
զի հաւատքը կարծիքէ աւել, բան մըն
է, ապրուած բան մը:

Աստուծոյ մասին հաւատքը՝ Աստու-
ծոյ դոյութեան մասին կարծիք մը չէ,
անոր հետ ապրելու ունակութիւնն է:
Յիսուսի մասին հաւատքը կարծիք մը չէ
թէ ան աստուածային է, այլ անոր հե-
տեւելու ունակութիւնն է Անմահութեան
հաւատաւը կարծիք մը չէ թէ հոգին
կ'ապրի մահուընէ վերջը, տնիկա ունա-
կութիւնն է ոչ թէ երեւցած բաները
տեսնելու, այլ այն բաները որոնք չեն
տեսնուիր, և տեսանելի բաներու ժա-
մանակաւոր և անտեսանելի բաներուն
յաւիտենական ըլլալը ըմբռնելն է: Ան
մահութեան ունակութեան կիրարկումը
այս անտեսանելի աշխարհին մէջ ապրելն
է: Կարենալ ըմբռնելն է թէ՛ չտեսնուած
բաներն են անհաշիւ, իրական և կարեւոր:
Տեսանելին և անտեսանելին, ժամանա-
կաւորը և յաւիտենականը իրենց ճիշտ
համեմատութիւններուն մէջ տեսնելն է:
Տեսնելն է թէ՛ դեղորսուտը պատկեր-
ներէն աւելի բան մըն է, երաժշտութիւնը

նուագախումբիէն աւելի, գրականու-
թիւնը մատենադարաններէն աւելի բան
մը, դպրոցը դասարանէն աւելի, կրօնքը
ծէսէն աւելի, ընտանիքը տունէն աւելի,
անձը մար'ինէն աւելի:

Այն որ այս ունակութիւնը կը պահէ,
այն որ այս կեանքը կ'ապրի, պիտի
տեսնէ որ անմահութեան մասին իր ու-
նեցած հաւատքը չպիտի լքէ զինքը, երբ
ապացուցուի որ տեսանելին ժամանա-
կաւոր է:

Եթէ նախնական դժբախտութիւնը
վրայ հասնի, և առնէ տանի հարստու-
թիւն մը որ համբարատար փութաջանու-
թեամբ ստացուած 'ը, և որ կրնա՞ր վեր-
կուիլ միակ անպատիւ արարքով մը զոր
չզիջաւ կատարել, պիտի նայի վրած
թու վրէժէ շէնքին և պիտի ըսէ ինքնիրեն.

— Փառք քեզ, Աստուած, որ չմոլո-
րեցայ, նկարագիրս անանկ չէ, պատիւս
անողարար մնաց:

Եթէ արկածը Լամ հրձիգին ջուհի
բռնկցնէ իր առնը, և գիրքեր, պատ-
կերներ, կարասի, տանիք, պատեր, բո-
լորը իր ստերուն տակ միացող մոխիր-
ներու կոյտի մը վերածուին, պիտի հա-
ւաքէ իր աղաքն և կինը՝ ի շուրջը — եթէ
հարկ ըլլայ վրանի մը մէջ —, և պիտի
ըսէ.

— Փառք Աստուծոյ, ընտանիքս ահ-
մեայ մնաց:

Եւ երբ մահուան հրեշտակը բաղակ
իր դուռը, և իր գտնակը կամ կեանքի
ընկերը իրեն կոչող բազուկներէն յա-
փշտակուի և չրթունքները լռեն, ոչ-
քերը առանց հոգիի մնան և սիրտը ան-
շարժ, անկողինը քով ծնրադրած տեղէն
վեր պիտի կանգնի, և մինչդեռ իր աչ-
քերը ուրա՛ւութեան և տխրութեան ար-
ունքի տարօրինակ խառնուրդով մը
ցտամկալած են, պիտի ըսէ.

— Փառք Աստուծոյ, նա մեռած չէ,
Որովհետեւ չէր կրնար մեռնիլ: Աչքե-
րովը կը նայէր, բայց աչքերը ինքը
չէին, չրթունքներովը կը խօսէր, բայց
չրթունքները ինքը չէին: Նա հաւատք,
յոյս և սէր էր: Է՛ր, է՛ր: Որովհետեւ հա-

բառարտութիւնը, և սկսաւ իր բոլոր ուժը կեդրոնացնել զո՛ւս Եկեղեցւոյ՝ երաժշտութեան վրայ, հետզհետէ երեւան բերելով նշանաւոր հեղինակութիւններ:

Կը պատմեն թէ Ար. Յովհաննէսեան ժշտաւ էր իր արուեստին բոլոր զաւանդիչները տանգելու. աւտի աշակերտներէն երեքը՝ Գաբրիէլ Երանեան, Համարձում Չէրչեան և Գաբրիէլ Պանճեան (յետոյ քաահանայ) չկարենալով օրինաւոր միջոցաւ ձեռք ձգել իրենց վարպետին գրութիւնները, ինչպէս նաև Պապա Համարձումի ձեռք գրուած բոլոր հին Պէթէներն ու Բիշրէֆները՝ որոնք Միւսէնտիսեանի ձեռամբ յանձնուած էին Արիստակէսի, զանազան հնարքներով կրչան ձեռք անցընել այն թանկագին ձեռագիրները՝ դարանէն վերցնելով կա՛մ սնունդը կոտրելով, որոնց համար կը գանգատէր շատ անգամ թէ «Գաբրիէլին մէկը տեսարակը գողցաւ, իսկ միւսը սնտուկը կոտրեց. ապէ՛ վերջը Գաբրիէլ հրեշտակը դայ նէ՛՝ վստահութիւն չունիմ»:

Չենք կրնար բոլոր ստիպել թէ Արիստակէս քանքարաթափողոյց եղած էր իր աշակերտաց, զո՛նէ այս տողերը գրողին նկատմամբ, որ մեծանուն վարպետին վերջին տարիներուն մէջ աշակերտելու բախտաւորութիւնը վայելած էր պարտաւոր ենք անկեղծօրէն խոստովանել՝ թէ իր հեղինակութիւններն անխոր յանձնած էր մեզ՝ օրինակելու և տեսնլմէ օգտուելու համար: Հետեւաւոր աւելի հաւանական կը թուի որ Արիստակէս ոչ թէ խնայել կողէր իր աշակերտներէն՝ քաղաքական երաժշտութեան վերաբերեալ եզանակները («Էսթէ, Բիշրէֆ, Սէմայի, Լեն»): այլ չէր ուզեր զանոնք վարժեցնել կանխաձատրէն այդ ճիւղին, վախճալով որ մի գուցէ ակաջնին վարժուելով՝ եկեղեցւոյ մէջ երգած ատենինն այդ եղանակներէն ազդուին, որոնց օրինակները տարաբախտաբար շատ կան հիմա: Յովհաննէսեան վերջին ծայր նախանձախնդիր էր եկեղեցւոյ, երգեցողութեան մէջ ո՛ր և է օտար եզանակ չներմուծելու, և միշտ կը պատուիրէր մեզի որ քաղաքական ելուէջներու մէջ

չմտորինք դպրութիւն ըրած ատենինս:

Բոլոր իր հեղինակութեան մէջ կրնար պարծնել Արիստակէս թէ երբէք քաղեղանակ մը չէ մայրուցած, և միշտ ջանաւ զիր գոմուած է չհետանալու զուս եկեղեցական տաճարներէ, մանաւանդ Շարականի մասին՝ զոր մասնաւոր նիւթ ըրած էր իր աշխատասիրութեանց: Իր Լոնկա Պաթանի տան խցիկը առանձնացած, շատ զիշերներ քունը գոհելով Թաւապուր ի ձեռին կ'աշխատէր կանոնաւոր չափերու վերածել Շարականաց եղանակները, որոնց մեծագոյն մասին համար կը պնդէր թէ ոտանաւոր են, և այդ զաւափարով տողորւած՝ կէտադրութիւններով սահմանաւորած էր Շարականներու գրեթէ երեք չորրորդ մասը, երբեմն յապուելով, սրպէս զի կարենայ միօրինակութեամբ ոտանաւոր չափերու վերածել՝ բոլոր սուները:

Այս գաղափարին (զոր ջերմապէս կը պաշտպանէր) բոլորովին հակառակ էին Մկրտիչ Ջալալեանէն, Կարապետ Դերձակեան, Նիկողոս Թաշճեան և ուրիշներ. ուստի որոշուեցաւ երաժշտական Յանձնաժողով մը կազմել, քննութեան առնելու համար Արիստակէս Յովհաննէսեանի բառաւոր չափերու վերածած այդ Շարականը: (Նկարագիր Ներդոց, 1874, Եղիա Տնտեսեան): 1873ին կազմուեցաւ այն Յանձնաժողովը՝ որոյ անդամակիցներն էին՝ Տ. Բարթուղիմէոս քահ. Սէֆէրեան, Տ. Գաբրիէլ քահ. Պանճեան, Տ. Յարութիւն քահ. Ղալաթիոյ, Սլիքսան Գրիգորեան (Տ. Վահան քահ.), Արիստակէս Յովհաննէսեան, Եղիա Տնտեսեան, Կարապետ Դերձակեան, Կարապետ Յակոբեան, Մկրտիչ Ջալալեանէն, Յակոբ դպրապետ Սամաթիոյ, Յովհաննէս Տէրոյնեյ, Յովսէփ Մալէգեան, Նիկողոս Թաշճեան, Ռէթէոս Փափաղեան:

Արիստակէս Յովհաննէսեան սկսաւ մաքրուիլ և շարունակ պնդել թէ Շարականի երգոյց բոլոր սուներն ալ պէտք է հաւասար թուով չափերու վերածել (իր աղարկողին էր այս): Եղիա Տնտեսեան կ'առաջարկէր ներկայ եղանակները զանուած վիճակին մէջ պահելով՝ միայն աղաւաղեալ

մասերը բարեկարգվել, որու համաձայն գրու-
նաւեցան մեծամասնութեամբ, մէկ մասն ալ
փափաք կը յայտնէր որ խողերու սրշու-
ղրութիւնն ըլլայ, վերջապէս որոշման մը
յանգեալու համար խնդրեցին Խրիմեան Հայ-
րիկէ՝ որ Պալեան Կարապետ ամիրայի ծա-
խիւք և Չէրչեան Համբարձումի ձեռամբ
ձայնագրեալ Շարականը բերուի անգամ մը:
Բաւական զմուտութիւններէ յետոյ վեր-
ջապէս յաջողեցան այդ գրութիւնը ներկա-
յացնել ժողովին:

Այդ ձեռագրի մասին ալ ժողովականք
համաձայն չգտնուեցան Յակոբիկ Մանուէլ-
եանի, որ բուն կերպով կը պաշտպանէր
դայն: Վերջապէս առանց ո՛ր և է արդիւնք
մը տրտալրելու ցրուեցաւ այս Յանձնաժո-
ղովը, ինչպէս պիտի ցրուէին իրեն յա-
ջորդող մասնաժողովներն ալ:

Նոյն միջոցներուն Գէորգ Դ. Կաթողի-
կոս փափաքեալով որ ձայնագրութեամբ տը-
պագրուին Շարահանայ ամրոցը երգեցո-
ղութիւնները, նախապէս հրաւիրեց Արիս-
տակէս Յովհաննէսեանը Ս. Էջմիածին.
սակայն նա այդ տարիքին մէջ չուզելով
բաժնուիլ իր ծննդավայրէն, ստիպուեցաւ
հրաւիրել Պաշտօն գալուպեան Կարապետ
Դերձակեանը (Պաղտատըեան) և Երանեանի
աշակերտներէն Նիկողոս Թաշեանը, որ-
պէս զի մին երդէ իսկ միւսը. ձայնագրէ,
ի սկզբան կանոնաւորութեամբ սկսաւ ըն-
թանալ սոյն հոկոյ աշխատութիւնը. բայց
յետոյ երբ տիրացաւ Կարապետ՝ որ ջերմ
հետեւողն էր Մինէճի Յովհաննէսի, անտու-
թէ իր երգածին յոր և նմանը չի ձայնա-
գրեր Նիկողոս Թաշեան՝ նախաւեճաւ, հա-
մարելով Վեն: Հայրապետին դատ տուած
եղանակը, չուզեց իր սկզբունքը գոհել
շահասիրութեան համար, ուստի արհամար-
հելով իրեն յատկացուած թոշակը՝ անմիջա-
պէս թողուց Ս. Էջմիածինը և Պալիս վե-
րադարձաւ, որպէս զի մասնակցութիւն
ունեցած չլլայ այս կերպով ձայնագրեալ
Շարականայ երգեցողութեան մէջ: Այն
տունն Ս. Հայրապետը ստիպուեցաւ աջակ-
ցութիւնը խնդրել նաեւ Մանկունի արտա-
գանին, որ անոնց հետ միանալով վերջա-
պէս աւարտեցին այդ մեծ աշխատասիրու-

թիւնը, զոր 1875 ին տպագրել տուաւ Գէ-
որգ Դ. Կաթողիկոս՝ ի Տպարանի Ս. Էջ-
միածնայ, պարտաւորելով ընդհանուր Ռու-
սաստանի մէջ կէտ առ կէտ հետեւիլ ա-
տոր: Եւ որովհետեւ Հայկական ձայնագ-
րութիւնը տակաւին չէր տարածուած հոն,
հրաման ըրաւ ամբողջ Թեմերուն, որպէս
զի այդ օրուքնէ սկսեալ բոլոր քահանա-
յութեան ընծայացուները պարտաւոր ըլլան
ի ձեռին ունենալ նաեւ իրենց ձայնագրա-
գիրութեան վկայականը:

ԱՐԻՍՏԱՆԿԵՍ ԲՃ. ՀԻՍԱՐԼՆԱՆ

(Շարունակելի)

ՍՈՈՑՈՒԱԾ ԷՋԵՐ

Մերոց Թարգմանչաց տօնին առթիւ, որուն
նուիրած ենք այսօրուան Խմբագրակա-
նը, շատ լաւ կար և ալ յիշեալեան և
ներկայացնել յուզիչ հասուած մը Ռու-
սահայ անուանի գրող Լէօն, քաղե-
լով անոր նշանաւոր ուսումնասիրու-
թեցէն՝ Ս. Մեսրոպի վրայ՝ զոր հրա-
սարակեց Գիրեւու Գիւթին հազար հինգ
հարիւր ամեակին առթիւ. —

ԱՌԱՋԻՆ ՀԱՅ ՌԻՍՈՒՑԻԶԸ

...Հայոց աշխարհում գիտ ևս մնացել էր
մի համազդային հիմնարկութիւն: Վաղար-
շապատի տպարանքներին մէկը դանդա-
ղ էր Կաթողիկէ եկեղեցու մօտ: Քաղաքա-
կան կործանման միջոցին նա էլ բաւական
խտրաւոր էր, բայց կարողացան սրահվել և
նրա շնորհիւ Վաղարշապատը այժմ էլ շա-
րունակում էր մայր քաղաք լինել Հայաս-
տանի համար: Այդ տպարանքը կաթողի-
կոսարանն էր:

Այդտեղ ահա, Մեհեկանի 13 ին (փե-
տլարի 17 ին) մի մարդ մուտաւ, և այդ
գէպքն էր որ յուզմունք տարածեց մայրա-
քաղաքի մէջ:

Վերջին տասը տարիների ընթացքում
Հայ ժողովուրդը մեծ մեծ կորուստներ էր
ունեցել: Կորցրեց թաղաւորութիւնը, վեր-
ջացաւ Արշակունիների տոհմը, կաթողի-

կոտական իշխանութիւնը իւրվեց Գրիգոր Լուսաւորչի տոհմից, յանձնվեց վառ ու արատաւոր օտարազգիներին: Վեց ամիսը զեռնոր էր անցել. ինչ խորին վշտի մէջ մեռել էր զահից հետաքրքած Հայոց Կաթողիկոսը, որի հետ վերջանում էր Լուսաւորչի հաշակաւոր տոհմի հողւոր տիրապետութիւնը, Իսկ այժմ այս կորուստը, վերջինը, որ տանում էր իր հետ զեղեցիկ յիշատակներ, Զգուժ էին որ Հայ աշխարհից վերանում է մի սուրբ, մի նուիրական բան: Եւ մինչդեռ Կաթողիկոսարանի սենեակում դրված էր այդ վերայոյդի անշունչ մարմինը, նրանից քիչ հեռու տաք վիճարանութիւն տեղի ունէր: Հաւարվել էին մարդիկ, մտածում էին թէ Հայաստանի մէջ ո՛ւր պիտի որոնել այն մի ամի հողը, որ այդ մարմինը իր ծոցում ամփոփելու պատիւն ունենայ: Երեք սուսակ կարծիքներ պային, երեք վիճող կողմեր, ամեն մէկը մի տեղ էր առաջարկում, պատճառաբանութիւններ էր բերում: չէր ուզում զիջիլ միւսներին:

Եւ այդքան սիրված ու յարգված հանգուցեալը հաշակված իշխանաւոր չէր, մեծանուն մի տոհմից չէր վարում իր ծաղումը, պատերազմի հերոս չէր կամ մի հաւրուստ կալուածատէր, աշխարհ կառավարող, հրամանատար չէր եղել, ոչ իսկ այս աշխարհի հզօրներից մէկն էր: Մօտ ութսուն տարեկան մի ծերունի վարդապետ — վարդապետ և ո՛չ իսկ կալիկոսոս — հասարակ զիւղացու որդի. — Ահա՛ ով էր նա:

Բայց այդ ծերունին մի հաս անուն ունէր. նա առաջին հայ ուսուցիչն էր: Գործել էր երեսուն ու հինգ տարի, և այժմ, երբ մահը իւրից էր նրա ձեռքից թուղթն ու զրիչը, Հայոց աշխարհը, առաջին անգամ իր պատմութեան սկզբից, զլուխ էր իջնցնում այդ նոր, մինչև այդ չեղած, զործիչի առջև: Երեւոյթը սրբան նոր էր, այնքան, և աւելի էլ, զարմանալի մեծ ու խորհրդաւոր էր: Մի երկիր, որ զարերի ընթացքում իմացել էր մի միայն կոպիտ ոյժի առջև խնամարկել, ա՛յժմ դանում էր պտուղու աբժանի մի նոր սկզբունք — Մտաւոր ոյժը: Գրքի հերոսը, առաջին ան-

գամ հայ հողի վրա, ստոնում էր այն պատիւներն ու մեծարանքները, որ մինչև այդ սովոր էին մատուցանելու արի հերոսին...

Բայցվել էր փետրվարեան օրը, բայց էին և Վաղարշապատի դռները: Մարդկային զլուխների մի ամբողջ ծով դանդաղ, յորձանքներ սալով, դուրս է թափվում: Մայրաքաղաքը շատ էր անակ փաղուն զօրահանդէսներ, արքայական յուզարկաւորութիւններ, այժմ նա ցոյց էր տալիս թէ զահից ու ինքնուրոյնութիւնից զրկված մի երկիր ինչ հզօր նեցուկ էր գտել, Շարժվում էր ծովայած, լուրջ ու մտախոհ ամբոխը: Պլպլում էին ճրագներն ու ջահերը, եկեղեցական երգեցողութիւնը արապէս ծաւաղվում էր պաղ օդի մէջ: Ճանապարհին զիւղական խմբեր էին միանում հանդէսին:

Իսկ ճանապարհը երկար էր: Արարատեան դաշտի երեսին ահագին բաղմութիւնը ամփոփվեց. համեմատաբար փոքր էր երեւում չրջապատող տափարակների անհուն տարածութեան վրա: Մասիսը, գեանից մինչև ինչ մինչև երկինք ձգված ձիւնեղէն սիւնը, հարաւից էր նայում Հայոց աշխարհի այս նոր երեւոյթին, իսկ հիւսիսից Արաքածի սուր գագաթները իրանց առաջապահ բարձրութիւնների ձիւնոտ զլուխների վրայով տեսան որ յուզարկաւորութիւնը թեքվեց զէպի իրանց կողմը:

Եւ իրաւ, Կաթողիկոսարանում վիճող կողմերից մէկը պիտի յաղթէր, և յաղթողը չէր կարող մի ուրիշը լինել, երբ վիճողների թւում էր և Հայոց հաղարապետը, Վահան Ամատունին: Պարսից արքունիքը, ջնջելով Հայոց թաղաւորութիւնը, Պարսիկ կառավարիչ (մարզպան) էր ուղարկում Հայաստան: Ամատունին նշանակուած էր հաղարապետ, և երկրի կառավարութիւնը մարզպանից յետոյ. նրա ձեռքումն էր Դա հայ լաւագոյն իշխաններից մէկն էր, և կառավարում էր ժողովուրդը «հայրաբար», ինչպէս վկայում է պատմութիւնը: Եւ պէտք էր որ այդպէս լինէր, որովհետեւ նա մէկն էր կրթված Հայերից: Առաջին հայ ուսուցչի գագաղը չրջապատել էին նրա աշակերտները: Դրանք էին ամենից շատ վշտացած, դրանք էին վէճ բացել

Թաղեան տեղի մասին: Վտան Ամառու-
նին էլ այդ աշակերտներէից մէկն էր: Բը-
նական էր որ նա կամենար իր անհատական
կողմածում թաղել իր սիրելի ուսուցչին:
Իսկ նրա կաշտածը այս դաշտից քիչ բայ-
ճքը էր գտնուէ: — Օշական ամբողջ:
Հայոց հազարապետը թաղման հանդէսի
գլուխն անցաւ: Նրա հետ էր այն ժամա-
նակից առաջնակարգ և ազգային տղնուա-
կան տան ներկայացուցիչը: — Հմայակ
Մամիկոնեան, Վարդանի եղբայրը:

Դաշտը տեղի տուէր քարքարոտ բլուր-
ներին: Արագածի շղթային առաջին բա-
նարն էին: Բազմութիւնը հասաւ ամենա-
մեծ բլուրի գլուխը, իջաւ Քառաշ գետի
մեծ ձորը, նորից դէպի բարձր գիւմեց: Օ-
շական էր: Այդտեղ իջեցին դազաղը,
այդտեղ եկեղեցին հրամշտ տուէր իր վա-
ղապետին, իսկ ժողովուրդը վերջին ան-
գամ երկրպագեց ուսուցչին:

Գերեզմանը փակիւց, Եւ այն օրից Օ-
շականի հողը պահուէ է իր ծոցի մէջ Ս.
Մարտիրոս:

(Ս. Մարտիրոս)

ԱՅՈ

ՍԻՍՈՆԱԿԱՆ ՏԵՐՏԵՐԸ (*)

Պետրոս հապճեպով բաւաւ:

— Օրիորդ Սուրբիկ, կ'ուզէ՞ք զիս ձեզ
ամուսին բնարել:

— Մայրս զիտէ, պատասխանեց աղջի-
կը, թեթեւ ինն դաշտալով:

«Մայրս զիտէ» նուիրաւործեալ բա-
նանէն է որ կը պատասխարէ ամչկոտ աղ-
ջիկներու պատկառանքը: Այլ չեղան յու-
զումի, խանդաղատանքի, սրով թրթե-
ռուն այս երկու բառերը կը սարդին աղջկան
մը ընդէն, կը պատմէ անոր սրտի հըրճ-
ուանքը:

Մօրն հաճութիւնը կտակածի ներքեւ
չէր: Պետրոսին կը մնար կատարել հորկ
եղած արարողութիւնները, Սուրբիկն
սեղեղու համար:

(*) Շարունակութիւնն նախորդ քիւնն:

Գ.

Այն պիշեքէն յետոյ ուր սիրոյ յայտա-
բար նախակը սպորեցուց Երանիկը ձեռքին
մէջ, Ստեփանիկ խոյս կուտար անոր հան-
դիպելէ. իրիկուն մը Երանիկ զէնն ելաւ:
Իրենց կ'երթար, երկուստարով դռնաթափ
մնայ. աղջիկը ինքուրով ձեռք մեկնեց:

— Աս ո՞ւր ես, չեա երեւոյր: Բաւա
քաղցրածիծաղ ժպտով:

Ստեփանիկ կ'էջանց, պատասխան չգը-
տաւ, սիրտը խնդութեամբ ողորւած,
տունն մտաւ աղջկան հետ, անոր ուրախ
ժպտը նամակին պատասխանն էր: Բա-
նասեւջը նայն զիշերն ոտանաւորի մը
մէջ զրաւ խանդավառ հազոյն թափն ու
գուրգուրանքն և յոնձնեց զայն Երանի-
կի: Երկու սրտերն այլ եւս իրարու ձուլ-
ւաւէ էին. էփրիկէնի պարտիկներն ու ծո-
փեղրն այնուհետեւ իրենց ժամադրութեան
հեշտակայր դրախտները եղան:

Իսկ Պետրոս ծանր մտաւորութիւն
ներս մէջ էր: Ամուսնութեան նախա-
տեսակը, նշանտուքը կ'ուզէր կատարել
զիւզն եւ ապա իջնել սովայն կը ծփծը-
փար վարանումի, տատանումի մէջ, զի
զիտէր մօրը խօսական տենչը, ձեռն
տեղէ աղջիկ տանել, իր «ամբան» Պետ-
րոսը կարգել պարզ տրեւտաւորի մը,
հասարակ ոսկերչի մը աղջկան, այնպիսի
արտաւայ զաւրաբար էր որ չէր կրնար
անխափառիլ առաջնապէս Գէորգի կնոջ
ուզեղին մէջ: Անտարակոյս Շապիկ տա-
տուի զիւնադրութիւնը մինչեւ սահման մը
կրնար յառաջանալ, վերջին խօսքը կը
մնար՝ ետրտին. բայց ներքիլ էր խոյն
խեղճ կնոջ սիրտը: Որդիական զգացում
ներն, ընտանեկան հանգստութեան հողը
կը պարտաւորէին Պետրոսը քաղցրութեամբ
հաճողը զիս:

Այլ կրնա՞ր յաջողութիւն յուսով իր
այս փոփառին: Եթէ մայրն հաճութիւն
տար իսկ, Պետրոսի միտքն աղաւ չէր կա-
նայի ցաւի մը երկիւղէն:

Առանց հոգերան փիլիսոփայ ըլլալու զի-
տէր թէ ամէնէն պարզամիտ կինն ալ կըր-
նայ փոխել խորագէտ գիւնապէտի երբ
վտանգի ներքեւ տանէ իր զաւակը կամ

աւնայնասիրութիւնը, ուստի "կարոտս խոհեմութիւն չէր համարեր՝ մօրը վատահիշ Սուրբիկը ինզկեւեւ փախուկ ձեռնարկը, կը ձանձնար անոր բնասարութիւնը՝ իրաւումը կը կտակածէր թէ Սուրբիկն ուզելու պահուն կրնար այնպիսի պաղ գործուածք մը ընել որ վիրաւորելով Քույրամհաններու անձնասիրութիւնը՝ մերժում տուջ բերէր, պատասխանատուութիւնը ձգելով աղջկան կողմը, Որպէս զի յաղթէ այդ ամէն զըմբարութիւններու, Պետրոս կարօտ էր աշակցի մը՝ յարմարագոյն եւ միանգամայն բնական աջակիցն համարէր իրենց տան քահանան։

Մարանկողեաններու սրբազաւէս սրաշտոնական տան երէցը չէր Տէր Վարդան, այլ հայր մը, սրտշաւ քարեկամ մը, Երկու եղբայրներու հայրն ու մայրը ինք պոսկած էր, ինք թաղած անոնց հայրն, ինք մկրտած Պետրոսն ու Ստեփանիկը, եւ երկուքին ու վարժապետն եղած։ Տէր Վարդանի յիշատակը խառնուած էր Մարանկողեաններու կեանքի ամէն ուրախ, ամէն վըշտուցի յիշատակներուն։ Երեսուն տարիներէ ի վեր եղած էր անոնց զօրավիզն ու միւսթարիչը։ Երբ «Տէր պապա» կ'ըսէին, խանդաղանտանքի ամէն նրբութիւնները կ'անդիտէին այդ երկու քառերուն շէջ։

Պետրոս գնաց հրաւիրեց Տէր Վարդանը՝ գալ մի քանի օր Պոյաճի-գեղ իրենց հիւր լլալ, ինչպէս արդէն խոստացած էր։ Պատարագին կարգը նոր վերջացուցած լլալով, տէրտէրը շաքաթ մը յետոյ միայն կրցաւ պնտասխանել այս հրաւերին։

Տաներէցին գալուստը մեծ ուրախութիւն պատճառեց Ստեփանիկին։ Երկնային սիրոյ հրապոյրները վայելելով հանդերձ, բանաստեղծն ալ սկսած էր իր կարգին զբաղան տառապանքներու համն տանուլ։ Երանիկի հետ ամուսնանալու անգուսպ տենչը զբաւած էր սիրան ու մարմինը, բայց երկու մայրերն իրեն զէմ կանգնած տեսնելով կը մնար ահաբեկ։

Իր մայրն համոզելու համար զմուտքութիւններն այնքան մեծ չէին երևնար։ Եղբորն հետ կը ծիծաղէին շատ անգամ խելով Շաղիկ տուտուի յաւակնութիւնները

Պետրոսի մասին, մինչ խորին ըռութիւն կը պոնէր Ստեփանիկի նկատմամբ։ Շաղիկ տուտու թէպէտ տղէտ, բայց մին այն բխրաւոր տղէտներէն որք կը կաղմեն հանրային կարծիքը, քաջ գիտէր թէ վարժապետի մը օտանկ տեղէ կարելի է միայն աղջիկ առնել։ Այսու հանդերձ մայրական սէրը յուսահատ չէր, Տակաւին շատ ժամանակ կար Ստեփանիկի կարգուելուն, եւ կը յուսար թէ մինչև այն տունն նոր գործի մը ժամելով չէնքով շնորհքով տեղէ աղջիկ կ'առնէր։


Մեծ խոչընդոտը ձուլիկ հանրմն էր, Երանիկի մայրը։ Գույրամհանները թէպէտ համեստ վիճակի տէր եւ անկարող զբաղմունք տալու, այլ սակայն փախաղ չէին կրնար ունենալ վարժապետ մը իրենց միակայ ընտրել։ Երանիկ չէր հասած կեանքի այն սահմանադրութիւն, ուր ամէն յոյս կորսնցուցած տղ եւս, զոհանար վարժապետով մը։ Գուէէ ձուլիկ հանրմն մտածութիւնները տարբեր լլալին, բայց Ստեփանիկ իր երկիւղներն իրականութիւն կը համարէր։

Միտքն այս մտաւտանջութիւններէն պաշարուած, Ստեփանիկ արտութեան մէջ էր մի քանի օրէ ի վեր։ Որոշեց սիրտը ըմբոյ եղբորը, գիտէր թէ ի՞նչ սէր ու զօրով կը տածէր եղբայրն իրեն համար, այլ նա պիտի լլալ իրեն համակարծիք, եւ եթէ համակարծիք գտնուէր իսկ, կըրնա՞ր միայնակ յաղթել երկու կիներու։ Տէր Վարդանի գալուստն յոյսի ողջոյնը եղաւ։ Եղբայրն ու տէրտէրն ապաւ հովաքար կրնային գործը զլուխ հանել։

ԱՐՓԻԱՐ ՓԻԱՐԵՈՆ

(Շարունակելի)

ՄԱՅՐԱԿԱՆ ՄԷՐԸ



ԲՆԱԽՕՍԱԿԱՆ

Միշտ կ'ըսուի թէ տղաք պարտական են սիրելու իրենց ծնողքը, իրենց կեանքին հեղինակները եւ այս հրամանը զրուած է աշխարհիս բոլոր օրինավիրքերուն մէջ։ Երբեք, սակայն, չէ պատուիրուած ծնողայն որ սիրեն իրենց զաւակները. բնական է

այս պարտադիր ընել որ զանոնք առ այս պիտի նշանակէր պարտադիր ընել որ շնչառութիւնը օդին միջոցաւ ընեն :

Մայրական սէրը իր մասնաւոր յատկանիշն ունի :

Փափաքիլ սիրուած անձը, զայն միշտ ուզել իր քովը, զգալ զինքը միշտ տեսնելու պէտքը, զայն սիրել, զգուել և պաշտել, ամէն սիրոյ յատուկ են ասոնք, և այս աս մէնը մայրը կ'ընէ անպատելի զորութեամբ :

Եթէ ծերութեան դուր հասած մորդու մը հարցունենք, « Զօրդ, և զբայրենքուդ, կենջղ, տղոցդ և թոռներուդ համբայրենքն ամէնքն ալ ստացար, բռէ՛ մեզ հիմա, ո՞ր համբայրենքն են որ հագույց վրայ ամէնէն աւելի խորապէս տպաւորուեցան, ո՞րն է այն համբայրը զոր կը յիշես ամենամեծ խանդավառութեամբ, թերեւս արցունքոտ աչքերով : »

Ան և ուրիշ ո և է մէկը չպիտի վարանէր պատասխանելու. — « Մօրս համբայրը : »

Սիրոյ զանազան տեսակները մեզ կը մղեն որ բարեք ընենք անոր որ կը սիրէ մեզ, և մայրական սէրը միմիայն բարութիւնով և զոհողութիւնով կազմուած է : Ժիւլ Սիմօն կ'ըսէ. « Ամուսնացած կանանց մէջ աղէկն ալ կայ զէշն ալ, բայց մայրերն են որ ամէնքն ալ աղէկ են : »

Սէրը *par excellence* կոչը է, բնական է, վասն զի ան չի տեսներ սիրուած անձին ո՛չ թերութիւնները, ոչ ալ անոր անբարասութիւնը, կեղծաւորութիւնները, Արդ, եթէ այդ մարդուն կնոջ համար ունեցած սէրը կոչը է, ապա ուրեմն մօրը իր զաւկին ունեցած սէրը թէ՛ կոչը է և թէ՛ խուլ : Սիրել այսօր, սիրել վաղը, սիրել միւս օր, սիրել զարձեալ, միշտ սիրել, ներել անոր ամէն յանցանքներուն, մոռնալ ամէն բան և ամենաբուռն պատասխաններու հանդէպ, ասուն անտարբերութեան դէմ, մղուլթեան անարդանքին դէմ, և մինչև իսկ ոճրուղործութեան պարագային, մայրը չի զսնեւ ուրիշ բան զայն դատապարտելու համար, այլ միտքն իր արցունքները :

Սէրը, ինչ տեսակ որ ալ ըլլայ, կը տառապի նախաւ կոչուած հիւանդութեան

նէն. արդ, մայրական սէրը կը նախանձի հօրմէն, քոյրերէն և մանուսանդ փեսայէն. անուրանալի է այս. դարերու, ազգերու, մեծ բնախօսներու փորձառութիւններն և տպացոյցները մէջտեղն են, մէջտեղ են նաև ենթակաները միշտ : Զոքանչ և փեսայ երկու բնական թշնամիներ են իրարու, երկու մրցակիցներ որք կը վիճին միևնոյն սրտուկի էակին բացարձակ և ամբողջական տիրացման : Այն օր չի հասկնար զօքանչին մշտտուել, յախտնական հակադրութիւնը իր փեսին դէմ, և իր տարօրինակ անփորութիւնները որոնք անկէ կը հաղին, կ'անդիտանայ թէ այս երկու էակները մին միւսին համար յախտակիչ մը և ախտեան մըն են. փեսան իր աղջկան օրինաւոր տեսանկիւնը և զօքանչը անոր նախանձորդը և նախանձը որ բնական բերամբ անկէ պիտի ծալի, աւելի հօր պիտի ըլլայ քան սէրը, վասն զի նախանձը իր լոյնը դրած է մայրական սիրոյ մէջ որ մարդկային գործութիւններուն ամէնէն զօրաւորն է :

Այն մասնաւոր յատկանիշներն որոնք մօր մը սէրը կը բնորոշեն ուրիշ ո և է տեսակ սէրէ մը, անդիմադրելի ինքնաբերականութիւն (*automatisme*) և եռամիտութեան բացարձակ չդոյութիւնն է :

Պաշտք, որ մարդկային սիրտն իր ամբողջ խորհրդաւոր խորհրդուն և գաղտնիքներուն մէջ մանրամասնօրէն ուսումնասիրած է, օքանչեւապէս կը դրէ. « Կինը որքան բարձրութեան որ բարձրանայ իր երազներուն զաղտնի բանաստեղծութեան միջոցաւ, զարձեւալ իր այդ բարձրութիւնը կը զոհէ ընտանիքին սիրոյն : Իր թուիչքը, իր հանճարը, իր ներշնչումները գէպի բարին, զէպի վսեմն, աղջկանը հոգւոյն բանաստեղծութիւնը, կը վերաբերի ընտրած մարդուն, իր ունենալիք զաւակներուն : »

Այն ամէն տեսակ սիրոյ մէջ ուր մարդկային սիրտը կը բաշխէ, բանականութիւնը կը միջամտէ միշտ չափաւորելու, կասեցնելու կամ ուղղելու, շատ անգամ իսկ մարդու համար զայն :

Մայրական սիրոյ մէջ, սակայն, կը տեսնենք թէ անդիմադրելի ինքնամոլն, բուռն,

հզօր եռանդ մը կայ յոր ծնի իր արտին ամենաթափառն ծաղկերէն :

Եւ իր գորութեան մէջ՝ մայրական սէրը, սէրերուն այս սէրը, կորովի ամէն աստիճաններն ունի, հազեկան նիւթին յաւափոփոխ (proteiforme) ամբողջ առաւ ձգականութիւնը, թանկագին բաներուն ամէն աստօթիւթիւններն ունի ան. աղաժանդին կարծրութիւնը, սոկիին փայլն ու կռանկիւթիւնը, բոլոր թանկագին քարերուն բազմաբանդ փայլը :

Մայրական այս սէրը փափուկ է, անուշահոտ և քաղցր է իր գորովանքին մէջ, քաղցրաբոյր է բնութեան ամէնէն գեղեցիկ ծաղկիներէն ալ աւելի : Իր հզօրութեան մէջ թէ՛ քաջ է, թէ՛ բուսն, թէ՛ բանաստեղծական և թէ՛ անողորմ, որ կարող է գործել ամէն զիւցաղութիւն և ամէն զոհողութիւն :

Մօր մը երկրորդ պաշտօնն է մեծցնել այն արարածը զոր ինն ամիս պահեց իր արգանդին մէջ, որ տարի մը անոց իր ճերմակ նեկատարովը էտկ մը որ գինքը կը կռէ մայրս, և որ ի գլուխ ամենայնի, կեանքին ստինքը և մարդկութեան սաղմն է :

Մայրութիւնը իր վեհագոյն սէրը, իր աստօթիւթեան պաշտօնը կ'սկսի ծննդաբերութեան անհնարին անձկութիւններուն մէջ, և յղութենէն վերջ, կաթնոտութենէն ձեռոյ, մայրը կու տայ իր արարածին երկրորդ սուրճ օրէնք մը, նուիրագործում մը՝ կրթութիւնը :

Մենք ամէնքս ալ երեք տեսակ կեանք կը պարտինք մեր մօրը իր արեան կեանքը, իր կուրծքին տառջին անունդին կեանքը և իր արտին տառջին զիտութեան կեանքը : Երեք կեանք, երեք բաժանում, երեք նուիրականութիւն, որոնք կնոջ կը կապեն ապագայ սերունդները :

Կատարեալ կինը երբեք մայր է. ծննդաբերութիւնով, լանջքով և խմշտականութիւնով : Բաշխտակէք այն մարդիկը որոնք օտար գաղտնաբանութիւն մը կամ աւուցիչէ մը կրթութեամբ են, անոնց հետ որոնք ստիպած են մօրմէն՝ առաջին տղոթքը և քերականը, անոնց հետ որոնք ստիպած են մօրմէն բարին և գոյն զանազանի, և

պիտի տեսնէք տարբերութիւնը այս երկու գաղափարներուն մէջ : Մարդը ա՛յնքան լաւագոյն է, այնքան աւելի կատարեալ է, որքան աւելի ջանքուած է բարոյական կաթմը մայրական լանջքէն :

Ուսուցիչը կրնայ զիտուն ըլլալ, շատ զիտուն նոյն իսկ. բայց երբեք չպիտի կրնայ ներարկել և հաշտել սրտին մեղքը իր տշտերաններուն ուղեղին մէջ : Մինչդեռ մայր-ուսուցչուհին՝ արմկեցուցած ամէն մէկ ճշմարտութիւններուն մէջ, կը զնէ կաթիլ մը այն նեկատարէն որ միայն իր սիրազեղ սիրտը զիտէ գտել. իր աւուցումը կրթութիւնն է և իր կնոջական յատուկ հանգստանքը, սուսնայ զիտնալու, անոնց ուղեւոր կը բխցնէ արական և սիրութեան ամէն փառչերը : Գիտութիւնով կը հաղորդէ և՛ բարութիւն և՛ պիտի : Չի կրնար ստիպել այն աւանդ սիրելու, և իրեն համար զիտնալը միտեալ տառ մըն է եթէ զգալման չէ միտցած, ինչպէս կ'ըսէ Մանթէկացի :

Այսպէս է կնոջ տփռնէն աղնիւ և աւմենէն մարդկային պաշտօններուն երրորդը :

Մայրը կը սիրէ իր տղան, տղեղ ըլլայ թէ ապուշ, յանցաւոր ըլլայ թէ անպատիւ, և յաճախ իր ամէն տղոց մէջ մօրը նախընտրելին զժրախտն է, ան որ իր ֆիզիքական և բարոյական թշուառութիւններուն համար ամենէն կը փախչի : Այս կէտին մէջ, յոռետես փլլիստիպ մը շարժառիթ մը պիտի գտնէք մայրը սխալ գաւտելու համար. «Բայց չէ՞ք տեսներ թէ կը սիրէ և կը պաշտպանէ նոյն իսկ արհամարհելի մարդը, որ անպատուած է իր անունը, որ անարգած է իր ընտանիքը, և այս՝ միմիայն իր արեան արիւնն ըլլալուն համար, իր մտին կտոր մը միան ըլլալուն համար. բայց ո՛ւր է մարդը այս կնկան մէջ : »

Ոչ, այսպէս չէ, այս մայրը միշտ մայր է. և մենք որ անկէ շատ ողորադառ ենք զգալաղութեան գաղտնաբանութեան մասին, չենք կրնալ հասկնալ այն կաթմի մաքրապարտութիւնը, այն գաղտնի տառագրանքները զորս մայր մը կը պարտի ծածկել անմենա անգաղտնապահ տեսողութենէն :

Իրմէ աւելի և ոչ մէկը չուզեր տեսնել իր զաւակը պարկեշտ և փառքի հասած: Եթէ մայրերուն գուշակութիւնները և իշխերը իրականօրէն, մարդկութիւնը մեծ մարդերու ակումբ մը պիտի ըլլար: Եւ ոչ մէկ հպարտութիւն այնքան իրօքաւ չէ, այնքան աղօթ և այնքան վեհ չէ որքան մայրական հպարտութիւնը, և երբ ստիպուի կարմրիլ իր զաւակին մէկ յանցանքին համար, ոչ ոք իրեն չափ, իբրէ աւելի կը տառապի: Հայրն ալ կը տառապի, բայց հօր մը տառապանքը ամենուս հատարակ եղող հպարտութենէ մը յառաջ կուգայ: Երբ տեսնէ թէ իր անունն ազտոտած է տղան շուրջը ցայտած տիպիին մէջ, իր վիշտը նողկանքով և ատելութիւնով կ'որոտայայտէ, ինք իրեն համար կը տառապի: Հայրը ինքն ալ կը սիրէ զաւակը և ուրախութիւններու աղբիւր մը կը գտնէ զինքն անոր կապող զգացման մէջ, բայց խիստ քիչ անգամ, կրնամ բռնել երբեք, չի կրնար սիրել հօր մը պէս: Զարմանալու բան չի կայ հոս, որովհետեւ բնութիւնը մօրն է որ սուած է իր տխր կեանքը պահպանելու խնամքը և մայրական զգայումը: Մարդը պարտի կնոջը օգնել այս սրբազան արշտօնին մէջ, և գրեթէ ինքն իրեն առանձին, ստեղծել զաւակին ընկերական անհատականութիւնը: Բնոր ասանք երկրորդական են և պատահական և մօր մը սրտին անպատճառ պէտք չունին: Կրնանք գտնել հայրական ուրախութեան մէջ աւանդաբանական զգայումներ, բայց երբեք չպիտի կրնանք գտնել այն յաւիտենական հրային կիզիչ նիւթը, այն լավան որ մայրական սրտին հրաբուխին մէջ կը մեռնէ: Հոս է որ բնութեան տնդիմադրելի, անխուսափելի պէտքերէն միայն գերազանցութիւնը հրաժայդարար տիրապետած է: Իրաւ է թէ հայրն է որ, թերեւ իր ամբողջ կեանքը կ'աշխատի: կը աքնի, կը գտնէ իր զաւակներուն զիւրավեցիկ կեանք մը ապահովելու համար:

Վեհանքն սրտի տէր հօր մը համար զաւակներուն բարիք բնելու միակ գաղափարը, անոնց երջանկութեանը պատասխանատու ըլլալը, մտածում մըն է որ

կ'ոգեորէ, կը սրտազնդէ և սր կը բաւէ միշտ բժշկելու համար իր կեանքէն տնդած ժան տխուր մտահոգութիւնները: Ինքզինքին ազատ կ'ըլլայ, կնոջը և զաւակներուն առատաձեւն ըլլալու համար, սրունց իր կեանքը և անունը տուած է, բայց վերը յիշուած պարագային մէջ զգացումը իր սրտին բարոյական լիւք մըն է, որուն բաժարձակ պէտք չունին զաւակները:

Մօր մը սիրտը զգոյշութեամբ այն զրամատունն է որուն միշտ կրնանք վրաս տահիլ: Տղան ապերախութենէն տքլ սիրտը կտոր կտոր ըլլալէն վերջ, անոր մէկ յանցանքին երեսէն խորտակուելէն վերջ, անոր անհատատարմութենէն ջախջախուելէն յետոյ, վերջապէս այն ամէն բանէ կտր որ մարդկային սիրտը կը փշրէ, կը սպաննէ, մօր մը սիրտը կը վերածնի իր ածիւններէն, ջերմ, եռանդուն, վեհանձն: Միայն մայրն է որ կը մոռնայ արժանապատուութեան վիրաւորանքը, ամենէն աւելի իր զերեւ եղած յոյսերը, և օգնութեան կը հասնի առանց զանաւորեան, առանց իսկ երեսին զարնելու իր յանցաւոր զաւակին որ զինքն ամբաստանած է կամ բամբասած: Տառապանքի վայրկեաններուն, մայրը կը վազէ չորցնելու համար անոր արցունքը, և եթէ իր վիրաւորեւած սիրտը արգելք ըլլայ խոսելու, և ոչ մէկ բան արգելք կ'ըլլայ սակայն որ ինքն ալ տառապի և սիրէ զայն: Եթէ կը ճանչնար երջանիկ մայր մը, զլուսեղբայր այս քաղցրաւատ անսարանը, եթէ կը ճանչնար զժրգոյշ մայր մը, յարգելէք զայն սուրբի մը պէս:

Հիւանդութեան պարագային գիտեցէք, մայրը թէ հայրը, եղբայրը թէ քոյրը աւելի կը տառապին: Մայրն է, անհերքելի կերպով մայրն է որ իր սրտին բովանդակ սիրովը անուշած զաւակին անկողնին քով, անձնաբարոյութիւնը և անձնութեան իր գաղաթնակէտին կը հառնէ, և ոչ մէկը կարող պիտի ըլլայ գրիչով նկարագրել մօր մը սրտին վիշտը, հոգւոյն կակիծը, բուռնութեամբ գիշերներուն զաւակներէն իր իրանդ զաւակին սնորհն քով կամ գաղտնադրի, և հօրմէն աւելի ունեցած զիւ-

բազմաժողովեան հակառակ, մայրը շատ աւելի լաւ կերպով կը զբաժնայ փոքրեկանն և նոյն իսկ բարոյական հասկում և այս տեսակ պարտադանիրու մէջ մեղի կուտայ ամէն որ ինքնամոխիվումի, անարտաքին համակերպութեան մը և խիստ շատ անգամ ճշմարիտ զխցադնութեան մը օրինակը :

Մայրական սէրը տնոպատ է, մշառ-
տեկ, նախանձատ, վսեմ նրբութիւններով
և խորին հրապրքով լի:

Եւ այսպէ՛ս պէտք էր որ ըլլար ի
վտան զի բնութիւններ կնոջ տուած է մարդ-
կային չեղր բազմաշնչու պաշտօնը :

Կինը զրեթէ թշուրովին տագնաւած է մայրութիւնով, այս կորստիւն կամ այս կենսականական կմախքին շուրջն է որ կը հաճախմարումին իր նկարագրին ամբողջ զրութիւնը, զրեթէ իր ամբողջ տառքինութիւնները և իր ամբողջ տկար կողմերը:

Իր սէրը, հօր մը սիրոյն պէս, անհե-
տացած չէ տակելութեան տեղի տալու հա-
մար, ան միայն իր բնութիւնը փոխած
է։ Նախ, հպարտութիւնով շողշողուն էր,
հիմայ կ'արտասուէ վիշտէն և կարեկցու-
թիւնէն։ Ժողովրդապետ, խիզախ սէր լին-
էր։ այս օր վշտագին գորովանքով մը կաղ-
մուած է։ Իր զաւակը, որուն համար այն-
քան չարչարուեցաւ, այնքան վտանգալի
տաղնադներու մատնուեցաւ ծննդոգործու-
թեան և կաթնոտութեան միջոցին, որուն
համար այնքան զոգաց, յուսաց և երազեց
տոբիներով, այլ ևս վատ մը, ճիւղ մը
է՝ մարդկային բնկերութեան, վատիւս մը.
բայց մարդ լինէ և որ կը աստաղի կամ
պարտաւոր է աստաղելու, և այս մարդը
իր մօին միտն է, իր տրիւնին արիւնը։
Ամէն մարդ կը փախչի անկէ, ամէն մարդ
զայն կ'ոտնի՝ Եւրոպայի վրայ սուանձին
է ան, աստելութիւններով և անտրգանք-
ներով չըջապատուած։ Ինչպէս պիտի կը-
նար ելլել այս կաշտիմէնէն։ Ո՛ր պիտի
զանէ տպաստան լ'ը, ինքը, տղան, բն-
տանիքին կայէնը։ Հոն, իր մօրը տաքուկ
արտին շէջ միայն, ար մինչեւ իր վերջին
շունչը իրեն համար պիտի ունենայ յոյս

մը, զորով մը չգլխոյ և ներողամտութիւն
բառ մը չմտածելով այն երկու առաջակի
նկարան մէջտեղ խոչնդած Քրիստոսին չոր
կ'աշտխէր անոնչ համար՝ իր մահաւան ճգ-
նամտախն դերաստչն, փայրիկաններուն մէջ
խոյզ

Հէրքաւաճախի եւ Բօմբէյի տեւրակներուն մէջէն գտնուած զիւհներուն դրամ-թիւեր ճշտութիւն կը պատկերացնէ երկու տե-սերուն նկարագիրը: Այլ մարդուն դիրքը կը ներկայացնէ դնդերացին բուռն կար-կամութիւններ զիմադրելու համար. կրնե-րունը՝ յուսահատական համակերպութիւն մը, իսկ մտքերուն դիրքը՝ հակած իրենց զաւրկներուն վրայ եւ փաթթուած տնոնց՝ իրենց թեւերով:

Հաւ կը յիշեմ, որ մը, մեր պարտեզին մէջ թռչունի րոյն մը գտայ. երբ մօտեցայ տեսայ թէ արբւն որ նստած էր ձուերուն վրայ՝ պօռաւով, կանչելով ձգեց փախաւ։ Էզը, ընդհակառակն, որ ելած էր կեր փնտնելու, խմբոյն հառաւ ու եկաւ իր պաշտօնին զլուխն անցաւ. ա՛լ անկարելի եղաւ զինքն իր թխտած տեղէն հանել։

Այսպէս է մարդկային լիդերուն մէջ
հօշ եւ մօր հոգեբանութեան հաւատարիմ
պատկերը :

Հ. Է. իկ. Ժ. առ. ԼԵՒՈՆ Յ. ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ՓՈԽԱԴԱՐՁ ՍՅՑԷ՝ ՈՒԹԻՒՆ

ՀԱՅ-ՀԱՅՄԻՆՍԿԱՆԱՅ ՊԱՏԻՍԹՈՐԻՆ

Շատ սիրալիր եղաւ տեսակցութիւնն
Ազգային Պատրիարքարանի մէջ, եր-
կու Պատրիարքներու միջեւ, փոխադարձ
այցելութեան տախիւ զոր Թէրզեան Սըր-
բազան տուաւ երկուշաբթի օր, իրեն հե-
տեւորդ ունենալով Արփիարեան և Ճէպէ-
հեան Արքեպ.ները, քարտուղար Ճամհեան
փրզալ, և վարչութեան կողմէ տոնհատեալ
Շիշմանեան, Յ. Խօշատանեան և Գ.
Ոսկեան էջ. Կերբ: Ենկերացեալն եւ Լուր,
Թէրզեան Սըրբազան ուրախութիւն յայտ-
նել ար սիրալիր եղբայրութեան մէջ ազ-
գին երկու ժառերը պիտի կրնան գործակ-

ցիւ կարեւոր ինքրոց վրայ՝ ազատ յարա-
բերութիւններով, և փափաք յայտնեց որ
բոլոր քրիստոնեայ Հոգեւոր Պետերը ու-
նենան իրաւուն հետ զործելու, աշխատելու
միութիւն մը, ազգերու շահերուն վերա-
բերեալ ինքրոց մէջ: Դուրեան Սրբազան
զիտել տուաւ որ Հոգեւոր Պետերուն մէջ
առ այժմ քրիստոնեայքայութեան ոգին հաս-
տատել ամենէն մեծ արդիւնքը կրնայ
տալ՝ կարեւոր պարագայի մէջ զործակե-
լով, լայն աշխարհի միութեան մը ձեւը
զուցէ տարբեր մեկնութիւն մը ստանայ
այն անձերէն որ լաւ աչքով չպիտի դի-
տեն այս կերպ միացում մը, սակայն Ս.
Պատրիարքն աւելցուց թէ կարելի է որ
երկու Պատրիարքարաններէ կարգուած
ներկայացուցիչներու միջոցաւ խորհրդակ-
ցութիւններ տեղի ունենան, և անոնց բե-
րած տեղեկութիւններն ի նկատ առնուին:
Ստուեցաւ հոգային խնդրոյն, նաեւ եկե-
ղեցական կալուածներու խնդրոյն վրայ:
Թէրզեան Ս. յիշեց Կիլիկիոյ Ս. Կաթողի-
կոսին կրած անձկութիւններն այս խնդ-
րոյն համար, և պէտք զգացուց զիմումնե-
րու: Խօսք դարձաւ նորէն Ատանայի վը-
րայ, և երկու Պատրիարքները խօսեցան
ժողովրդեան թշուառութիւնը դարձանե-
լուն միջոցներուն վրայ, որոնք անբաւ-
կան են, և այս մասին ալ զիմումներու
պէտքն զգացուեցաւ: Յունաց Պատրիար-
քարանի տաղնապին ստիւա Ս. Պատ-
րիարքը փափաք յայտնեց որ Յայն ազգն
զգուշանայ ծայրայեղութեան մղուելէ, որմէ
մեծ վնասներ կրնան յառաջ գալ: Թէրզեան
Ս. չեղտեց ուրիշ պարագայի մը վրայ, ո-
րով կ'աշխատուի որ կղերը միայն հոգեւոր
պաշտօն կատարէ և վարչական զործերու
չմիջամտէ: Այս տեսակ փորձ մը եղաւ Ա-
տանայի մէջ ալ, բայց, սակայն հոգեւոր
պետերը հաւաքաբար զործեցին և յաջողե-
ցան: Դուրեան Ս. աւելցուց թէ կ'ուզուի
անհատական դոյն տալ ամէն ինքիրներու,
ինչ որ առանձնաշնորհումներու ալ կրնայ
վնասել: Յուլիս 10-ի ազգային տօնին առ-
թիւ արձակուելիք բանտարկեալներու վրայ
եւս խօսուելով, երկու Պատրիարքներն
համամիտ դոնուեցան որ ինքրուի յետա-

ձգել կարգ մը ոճրագործներու արձակու-
մը, ինչ որ վտանգ մ'է երկրին: Այս մա-
սին երկու Պատրիարքներու կողմէ ալ
զիմում պիտի ըլլայ, և ուրիշ պարագա-
ներու մէջ ալ Հայոց և Հայ-հռոմէականաց
ներկայացուցիչներ՝ ըլլալիք զիմումներու
մասին պիտի խորհրդակցին նախապէս:
Պատուասիրութիւններէ ետքը Հայ-հռո-
մէականաց Պատրիարքն և իրեն ուղեկիցք
մեկնեցան յարգանքի ցոյցերու մէջ:

ԿՐՕՆ. ԺՈՂՈՎԷ, իր Դշ. ի նիստին
մէջ շատ կարեւոր որոշում մը տուաւ:
Միայն եկեղեցական տեսակէտով և պատ-
մական լուրջ ուսումնասիրութեամբ ա-
մուսնական և ամուսնայութեան օրէնքներ
խմբագրելու համար որոշեց Եկեղեցական-
Օրէնագրական մարմին մը կազմել նախա-
գահութեամբ Ամեն Ս. Պատրիարք Հայ-
անդամ նշանակեց Տ. Մաշտոցիս Եպս-
Տէրունեան, Տ. Գեղէ Ծ. Վ. Գալմաթե-
րեան, Տ. Վահան քահ. Խոյեան, Տ. Սա-
քիսա քահ. Պալրդէսեան և Տ. Տրդատ քահ.
Պոյաճեան:

ԱՐՄԱՇՈՒ փոխ վանահայր Տ. Մե-
րուց Ծ. Վ. նարոյեան տեղեկագրած է
Կրօն. ժողովին թէ Նիկոմիդիոյ առաջնորդ
Սրբազանը Արմաշի մէջ Յուլիս 4-ի կիր-
որը երեք սարկաւաղները արեւոյ ձեռ-
նադրած է, Թորոս սարկաւաղը Տ. Հմայ-
եակ, Արամայիս սարկաւաղը Տ. Հրանտ և
Յակոբ սարկաւաղը՝ Տ. Համադատը կո-
չելով:

ԱԶԳԱՆՈՒԷՐ ՀԱՅՈՒ ՀԵՍՑ քնկերութիւնը
որոշեր է վարժուհիոց մը բանալ յառաջի-
կայ տարեշրջանին Կարնոյ մէջ: Սանասա-
րեան վարժարանի բրովէսէօրներն անձնոր-
դարար պիտի դաստիարակեն այնուհետ:

Պիլէճիկի ազգայնոց մէջ յառաջ եկած
երկարատեւութիւնը, որ մինչեւ անջատման
և առանձին շէնքի մէջ մասուս բանալու
առաջնորդին հասած էր, առաջնորդութեամբ
Թորոս քահ. ի, (այժմ կարգաւարդ,) և
120 քնտանիքներ բողոքականութեան զի-
մել կ'սպասնային, ուրախութեամբ կը
կորզանք թերթերու մէջ թէ վերջնական
հաշտութեան մը յանգած է, շնորհիւ Տ.
Բարդէն Ծ. Վ. ի ազգու ջանքերուն:

ԱՐՏՈՆԱՏԷՐ

ՀԱՄ ՅԵԱՆ ԳԷՆՅ. ԷԳՄԷՐՃԵԱՆ

ՏՆՈՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ՋԱՐԲԱՅԵՐ ԳԷՆՅ. ԿԷՋԻՒՐԵԱՆ

ՅԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՏԱՇԷՍ ՆԵՐՍԷՍ

ՍՏԱՑՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

ԳՐԻՍՏՈՆԷՌԻԹԵԱՆ ՄՈՒՏՔՆ Ի ՀԱՅՍ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻԶԷՆ Ա. ՌԱԶ. — Գրեց Գէորգ-Մեսրոպ. — Քրեանական ուսումնասիրութիւն Ա. դարերու մէջ քրիստոնէութեան մուտքին վրայ ի Հայս, ըստ պատմական նորագոյն հետազոտութեանց: Օ. Արզուման մաքուր տպագրութիւն: Գին 5 ղրշ.:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԾՈՍՈՒԹԻՒՆ ԵՒ ԲՆԱԾՈՍՈՒԹԻՒՆ. — Գրեց Տէր. Ն. Տաղաւարեան. — Ազգ. նախակրթարաններու համար պատրաստուած դասագիրք մը, կուռ բովանդակութեամբ: Ունի 128 էջ, և 55 կազմաւորական ընտիր պատկերներ: Գին 5 ղրշ.: Կեդրոնատեղի Մատթէոսեան գրադատանոց:

ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՐՑ ԵՒ ԾՆՈՐՀԱՆՈՒՄ. — Պատմա-ֆնակական տեսութիւն. — Գրեց Արտուրազ Ծ. Վրդ. Գալէնտէրեան: Երիտասարդ Արմաշականին վարդապետական ձեռնագրութեան առթիւ գրուած theses է այս հատորիկը, որ Մարդուանի Ներսիսյան տալարանին իւրջս ելած է մաքուր տպագրութեամբ: Ազգային եկեղեցական պատմութեան կարեւոր մէկ գրուածքը կը պատկերացուի ասով, միեւնոյն ատեն ծանօթացուցով հոյակապ երախտաւոր ղէմք մը՝ Հայ Մատենադիր-կաթողիկոսներու շարքին մէջ: Գին 4 ղրշ. կեդրոնատեղի Եազըճեան գրատուն. Սուլթան Համամ, պոզըրճըլար:

ԱՄԻՍ ՄԸ Ի ԿԻԼԻԿԻԱ. — Գրեց Տիկ. Արեակունի Թեոդիկ. — ականատես հեղինակուհին այս հատորին մէջ խոստացած է իր ցուպին տպագրութիւնները, որը օրին զրի տանուած՝ բանաստեղծական նկարուն գրչով մը: Աւելի քան 200 էջերէ բաղկացած զեղեցիկ հատոր մը, զարդարուած տեղւոյն վրայ առնուած բազմաթիւ լուսանկար պատկերներով որ կը ներկայացնեն տեղեւալ վայրերու տեսարաններ և հերոսական ղէմքեր: Յուզումով, արցունքով կարդացուելիք գիրք մը, որու ընթերցումը ճշմարիտ վայելք մըն է միեւնոյն ատեն: Գին 7 ու կէս ղրշ. գաւառներու համար 9 ղրշ. Կեդրոնատեղի Տէր Ներսէսեան վաճառատուն:

«ՅԻՇԱՏԱՆԱՐԱՆ»

Հայ երեւելիներու կենսագրութիւնները, լուսանկարները, գրութիւնները եւն.

Վերջերս հրատարակուած 11-12 միասնալ թիւով ամբողջացաւ Ա. հատորը, գեղեցիկ տպագրութեամբ և շահալից պարունակութեամբ: Գին 30 ղրշ.: Հրատարակութիւն Վ. և Պ. Զարդարեան եղբայրք: Կ. Պոլիս Զաքարիա:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏԱՆ

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՈՒԹԻՒՆ ԵՒ ՈԳԵՀԱՐՀԱՐՑՈՒԹԻՒՆ. — Գրեց Յովհաննէս Գալանճեան: Իր ուշադրաւ պարունակութեամբ և հոգեբանական վերլուծումներով արժանի ամէն գրագարաններու մէջ գտնուելու

Գին 6 ղրշ.

ՄԱՍՆԱԿԱՆ ՊԱՏՈՒԹԻՒՆ, ՀԱՅ ՄԵՇՈՒՆՆԵՐՈՒ. 1400-1900. — Հմուտից գործ Զ. Գ. Մամիկան Էֆ. ի: Գին 10 ղրշ.

ՆՊԻՊՐ ՓԱՇԱ. — Ֆրանսացի գրողի մը՝ Էմիլ Պէրիքանի «Նիշերն և տպաւորութիւնները» Հայ մեծանուն քաղաքագէտին վրայ Հայերէնի վերածած է ծանօթ գրող մը, Մեսրոպ Էֆ. Նուպարեան, անդամ հոգի գերդաստանի, որ ընտանեկան շահեկան մանրամասնութիւններով և քաղաքական պարագաներով ալ ճոխացուցած է գործը, զարդարուած հայր և որդի Նուպար փաշաներու գեղատիպ պատկերներով.

Գին 5 ղրշ.

ԳԻՍԱԽՈՐԻ ԵՐԸ. — Ժողովրդային պատմութիւն բոլոր գիտաւորներու: Գին 5 ղրշ.

ԿԱԻԷ ԱՐՁԱՆԻԵ. — Յ. Շահբիկեան. Գրեց Արամ Անտոնեան: Գին 7 ու կէս ղրշ.

ԱՌՁԵՌՆ ՖՐԱՆՍԱՀԱՅ ԲԱՌԱՐԱՆ, ԱՇԽԱՐՀԻԿ, Մ. Նուպարեան Էֆ. ի: Մանկայ տակ: Բաժանորդագրութիւն (կազմեալ) Պոլսոյ համար 20 ղրշ., Գաւառացի՝ 25 ղրշ.: Արտասահման՝ 5 ու կէս ղրշ.:

Գին 40 Փարա